8. Հավաքարար -բակապահի աշխատավարձը սահմանել համայնքի ղեկավարի աշխատավարձի 43,37% -ի չափով ավելացրած 8000 դրամ բարձր լեռնային, որը կազմում է 103000/ մեկ հարյուր երեք հազար/ դրամ:
9. Բակապահի աշխատավարձը սահմանել համայնքի ղեկավարի աշխատավարձի 32,19% -ի չափով ավելացրած 8000 դրամ բարձր լեռնային, որը կազմում է 78500 /յոթանասուն ութ հազար հինգ հարյուր/ դրամ:
10. Պոմպակայանի մասնագետի աշխատավարձը սահմանել համայնքի ղեկավարի աշխատավարձի 32,19% -ի չափով ավելացրած 8000 դրամ բարձր լեռնային, որը կազմում է 78500 /յոթանասուն ութ հազար հինգ հարյուր/ դրամ:
11. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորակերտ համայնքի ավագանու 2015 թվականի հունվարի 14-ի թիվ 2 որոշումը:
12. Հանձնարարել հաշվապահին ղեկավարվել սահմանված դրույքաչափերով:
13. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Լսեցին 3 - Նորակերտ գյուղի Ս. Սարոյանի անվան միջնակարգ դպրոցի ուսուցիչներին շրջազայության համար դրամական օգնություն տալու մասին:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16 –րդ հոդվածի 1 –ին մասի 5 –րդ կետի դրույթներով ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորակերտ համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորակերտ գյուղի Ս. Սարոյանի անվան միջնակարգ դպրոցի ուսուցիչներին ՀՀ տարածքում շրջազայության համար տրամադրել 30000 /երեսուն հազար/ դրամական օգնություն:

2. Հանձնարարել հաշվապահին կատարել համապատասխան փոխանցում:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Լսեցին 4 - Նորակերտ համայնքի դաշտամիջյան ջրատարը մաքրելու համար դրամական աջակցություն տալու մասին Գ. Սարգսյանի ելույթը:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16 –րդ հոդվածի 1 –ին մասի 5 –րդ կետի դրույթներով և հաշվի առնելով Նորակերտ համայնքի բնակիչներից ստացված դիմումները համայնքի դաշտամիջյան ջրատարը մաքրելու անհրաժեշտությունը ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորակերտ համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

1. Նորակերտ համայնքի դաշտամիջյան ջրատարը մաքրելու համար հատկացնել դրամական օգնություն 95000 /իննսունհինգ հազար / դրամի չափով:

   Վոլոդյա Սիմոնյան – 35000/երեսունհինգ հազար/ դրամ:

   Յուրիկ Կարապետյան – 30000/երեսուն հազար/ դրամ:

   Կամո Հովսեփյան – 30000/երեսուն հազար/ դրամ:

2. Հանձնարարել հաշվապահին կատարել համապատասխան փոխանցում:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: